

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2010 թվականի հոկտեմբերի 7-ին

### «ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի մայիսի 14-ի ՀՕ-118 օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 2-րդ և 8-րդ կետերը «ապրանքների» բառից հետո լրացնել «(բացառությամբ ծխախոտի արտադրանքի)» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ կետով՝

«11) ծխախոտի արտադրանքի ներմուծման և օտարման գործարքների հարկվող շրջանառությունը որոշվում է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մակնշված՝ ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գինը՝ առանց ԱԱՀ-ի»:

**Հոդված 2.** Օրենքի 15-րդ հոդվածը՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 31-րդ կետով՝

«31) ծխախոտի արտադրանք արտադրող չհանդիսացող և (կամ) ծխախոտի արտադրանք ներմուծող չհանդիսացող անձանց կողմից ծխախոտի արտադրանքի իրացումը.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 32-րդ կետով՝

«32) դիզելային վառելիքի ներմուծումը և (կամ) օտարումը»:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին կետի, որոնք ուժի մեջ են մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության  
Նախագահ

Ս. Սարգսյան

2010 թ. հոկտեմբերի 20  
Երևան  
ՀՕ-129-Ն